


ՏՐԻ ԵՆ ՏՆՈՐԻՆ
Ե. ՓՈՐՓՈՍԵԱՆ

Նամակ կամ որ եւ է
Կրօնական հարցեր քննարկում
Ստորագր. ԱՐՇԱՆՈՅՍ Իրագրի
ԳԱԶԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱԿԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԿԵՊՏՈՍԻ ԶԱՄԱՐ	
Տարեկան սոց. դասիկ. 60	
Վեցամսեայ » 35	
ՕՏԱՐ ԵՐԿՐԵՆԵՐ	
Տարեկան Գրական 20	
Վեցամսեայ » 12	

Բ. TOROSSIAN
Direc.-prop. du journal arménien
ARCHALOUYCE
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇԱՔԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԿԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆՈՒԿ
ԵՒ ԹՊԹՈՒՄՈՐԻ ԺԱՐՔԸ
ԽՆԻՍԱԳՐՈՒՄԵԱՆ ԱՐԱՅ Է :

ԽՆԻՍԱԳՐՈՒՄԵԱՆ ՈՂՊՈՒՄ
ԳՐՈՒՄԻՆԻՖ ԵՍ ԵՆԵՆ ՏՐՈՒՐ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ
ԿՈՆԻԿԻ ԳՏԱՐԵԼԻ ԵՆ

ԱԶԳ

«Արշալոյս» ցրուիչի մը պէտքը ունի,
փակած քննարկը թող զիմեն թերթիս Տնօ-
րինութեան :

ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ՀԵՐԲՈՒՄ

ՇԼԵԹ ԷՓՄԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՆՈՒՄԻՆ
ԱՌԹԻԻ

Մեր անցեալ թուով արտատպեցինք
այն թղթակցութիւնը՝ որ Գահիրէի Առաջ-
նորդարանի շրջանակէն զրկուած էր «Բի-
զանդիզն» ի, իբր կէս պաշտօնական հե-
քում, միևնոյն թերթի մէջ ասկէ առաջ
հրատարակուած և նոյնպէս «Արշալոյս» ի
մէջ արտատպուած գրութեան մը, որ Շէյխ
Էթմանի կալուածին պատճառաւ Ազգին
տան կրած փաստերուն կը վերաբերէր :

Այդ հերքման գրի ստորագրողին մտա-
ւորական կարողութեան վրայ արդէն հա-
րկանցի ազնարկ մը նետեցինք մեր անցեալ
թուով, ուրեմն մեզ կը մնայ ընդունիլ թէ՛
հերքման գրի մը՝ ո՛չ թէ ստորագրողն է որ
մտածած և արտագրած է, այլ Առաջնոր-
դարանի շրջանակին մէջ պատրաստուած է
այն, և իբր խոյժ մը հանրութեան առջև
նետուած, վարպետելու համար այն խո-
չոր գեղձումները որ մնայուն կերպով կը
գործունին Գահիրէի ազգային առաջնորդա-
րանին մէջ :

Մեր ակնարկած գեղձումները ապացու-
ցանելու համար՝ նոր վկաներու պէտք չու-
նինք այլ ևս՝ կրնանք ուղղակի դիմել այն
նամակին՝ որ հրատարակուած էր — ինչպէս
ի վերև ըսինք — առաջնորդարանի կողմէ և
ո՛չ թէ ստորագրողին, որ մինչև ցարգ-
գեռ չէ հասկցած թէ՛ ինչ նպատակաւ իր
ստորագրութիւնը, իբր «Առաջն. նախորդ
Տեղապահ» զետեղուած է «Բիզանդիզն»
ի ուղղուած նամակին մէջ :

«Պաշտօնական հերքում» ներու նոր-
ժէքը գիտենք արդէն. այդ կանոններգու-
թիւնը մարդկութեան մէջ զիւսնազիտական
սերմը ցանուելէն ի վեր խաղցուած է :

Մենք այժմ ամենէն մտտակայ և դեռ
թարմ օրինակը կրնանք ներկայացնել մեր
ընթերցողներուն :

1893 էն սկսեալ Պոլսոյ բոլոր քա-
ղաքացի մէջ հետեւեալ «պաշտօնական յայ-

տարարութիւնը» կը տեսնենք. «Շնորհիւ
Վեհափառ Սուլթանին Մուշի, Վանի, Կար-
նոյ, Պիթիսի, Սամսոյ և այլ բոլոր Սա-
մանեան հպատակ գաւառաց և քաղաքաց
մէջ, անդորոյթիւն և խաղաղութիւն կը
տիրէ » :

Ինչ կը լսենք հետեւեալ օրը՝ Սամսոյ
մէջ կոտորած, Բաղէշի մէջ սրածուծիւն,
Մուշի մէջ գողութիւն, կոտորած և աւար
են. են :

Ասոնք «պաշտօնական յայտարարու-
թեանց և հեքումներու» արդիւնքը չէ՞ ին-
կայ մէկը որ քաղութիւնը ունենայ ուրա-
նալու այս ամենը :

Հիմակ քանի որ հաստատեցինք «պաշ-
տօնական յայտարարութեանց և հերքում-
ներու» պարզապէս կատակերգական խոյժ
մը եղած լինելը, գառնանք քննելու Շէյխ
Էթմանի կալուածին նկատմամբ՝ Մամբէ
Քահանային ստորագրած նամակին մէջ քանի
մասերը :

Առաջին. նախորդ Գեղապահը (*) իւր
հերքման գրի այսպէս կ'սկսի, նախնաբանը
աւարտելէ վերջը :

«Ստորագր. որ վարժարանի վերաբեր-
եալ կալուածի մը երկամեայ (1899 Սեպտ.
10-1901 Սեպտ. 9) վարձատուութեան առ-
թիւ դատ ծաղած է վարձակալին ու առաջ-
նորդարանին միջև, վասնզի վարձակալը,
փոխանակ երկուստեք կանխաւ գոյացած
համաձայնութեան համեմատ՝ Շէյխ Էթմանի
Էպսկոպիին պարտականութիւնը նախորդ վար-
ձակալին կազմուած ցուցակին հետ քաղ-
ղաքէն և արդիւնքը առաջնորդարանին
հաղորդելու պէտք եղածը սեօրիւնելու հա-
մար («...») անխնայելով լուծուած ու յետոյ
1900 մարտի 3 ին գառ բացած է առաջնոր-
դարանի դէմ, պահանջելով փաստի հա-
տուցում, գլխաւորաբար «Արմաւենիները
գէշ հօտուելուն» և երկրորդաբար «անոնց
մէջ պոկածներ գտնուելուն պատճառաւ » :

Շատ լաւ կը հարցնենք առաջնորդա-
րանին, որ գատողութենէ և մտաւորական
կարողութենէ բացարձակապէս զուրկ մէ-
կուն այս տղերքը ստորագրել տուած է,
թէ՛ իր աստիճան արամաբանական է հա-
մաձայնիլ — ինչ կերպով որ ըլլայ — վար-
ձակալի մը հետ, որ նախորդին յանձնած
կալուածի պարտականութիւնները բաղդատէ
և արդիւնքը առաջնորդարանին հաղորդէ,
ի պատճառ պահանջ սեօրիւնութիւնը !!! :

Առաջնորդարանը իր բոլոր պաշտօնե-
աներով, ինչպէս այս տղերքը ստորագրողն
ալ, գիտենք — և այս ո՛չ թէ 1899 ին,
ինչպէս կ'ուզէ հաստատել «Բիզանդիզն» ի

հերքման գրի ստորագրողը, ալ 1896-97
և նոյն իսկ անկէ աւելի առաջ — թէ՛ Շէյխ-
Էթմանի կալուածին պարտականութիւնէն շատ
բաներ պակասած են. ինչո՞ւ ուրեմն նախորդ-
վարձակալին կալուածի ստացման գործողու-
թիւնը կատարուելու տեսն, կամ իրենք
ուղղակի՝ և կամ իրենց կողմէ՝ կարգուած
ներկայացուցչի մը միջոցաւ չը կարգադրե-
ցին խնդիրը. ինչ քաղաք մնայական կար
այսպէս վարուելուն մէջ. կամ թէ՛ նոր
վարձակալին անխնայելով լուծուած ան-
չո՞ւ իրենք աւելի շրջահայեաց և փութկոտ
չը գտնուեցան վարձակալին հարցնելու թէ՛
ինչո՞ւ կ'ուզանք կազմուած ցուցակին բաղ-
դատութիւնը աւարտել և արդիւնքը հա-
ղորդելը :

Երբ վարձակալը իր շահը ի նկատի ու-
նենալով կը լուծու ժամանակ վաստակել
կուզէ, պէտք է որ Առաջնորդարանն ալ
անոր ընդարձակ միջոց տար, իր նպատակին
մէջ յաջողելու համար՝ ո՞վ է յանցաւորը
ուրեմն. Առաջնորդարանը, որ իր կալ-
ուածին վրայ հսկել վիտցած չէ, թէ՛ վար-
ձակալը, որ շահելու նպատակաւ Առաջ-
նորդարանին կալուածը վարձած է, և իր
ցեղին յասկոյթիւններովը պէտք է օժտու-
ուած ըլլայ... :

Մենք առանց վարանելու կ'ըսենք թէ
յանցաւորը առաջնորդարանն է՝ որ այդ
ընթացքը բռնելով՝ ո՛չ միայն շատ մը ան-
ցեղայն մէջ գործուած գեղձումներ ծածկել
ուզած է, այլ և միջոց մտաւարարած է
շահախնդիր վարձակալին, որ այսօր իր
բաշխը ցցէ իրեն դէմ :

ԵՂԻՇԷ

(Շարունակելի)



Տոնք իմ քեզու, բոլոր մտպանակ,
Բոյնի դրկելով Մասեաց աստեղուն վրայ,
Հայոց աշխարհէն մեզ անտեսի սառ,
Թէ վարդ ու շուշան կոկոն կը բանան :

Տոնք իմ քեզու, մոտենայ գարուն,
Զօնեմ իմ երգերու Հայոց արեւուն,
Արեւներ կ'երգեն ստեղծակն ու սոխակ,
Ու դէռ ևս մընաւ միջոց այսպէս ի քուն :

Տոնք իմ քեզու, սուրբ հանգրայնիկ,
Զայնիս կրտսերուն ոչխար ու գառնիկ
Կեանքը և նորոգի, շրտել սիրտուն
Հայ գառնակներուն երգելը ՄԱՅԻԿ :

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՍՆՈՒՆԴ

— 000 —

(Շարունակութիւն 171 թիւնն եւ վերջ)

Նախորդ երկու յօդուածով ըստ կարի պարզեցինք թէ՛ մտղէն կերակուրները նուազ սընուցել նիւթեր կը պարունակեն քան բուսեղէնք, ինչպէս նաև չափազանց մսակերութեան պատճառաւ հիւանդութիւններն :

Տօքթ . Ժիւլ Կրան կը դատաւարտէ նորածին մանկանց մասին ծնողաց այն ջանքն , որով գիեցիկ մանկանց և կամ 5 ամսուան , կաթէ զատ մտի ջուր եւ մտի կտոր կուտան եւ անոնց վաղահաս մտնուան պատճառ կ'ըլլան շատ անգամ , այդ փոքրիկ արարածներուն մարտողական գործարաններն խանգարելով , եւ աղիաց բորբոքման եւ փորճարութեան ենթակայ ընելով զանոնք , եւ կը յաւելու թէ՛ մանուկները օրական 5 կրամ ֆոսֆորի պէտքն ունին իրենց ոսկորային զրութեան եւ մորթին զօրացման եւ բարգաւաճման համար , եւ մօրը կաթը այդ պէտքը կընայ լնուլ : Երբ մանկիկը ասկաւ մեծնայ , քալիփոխան , եւ արտօրը կաթին հետ ետացնելով տալու է , որոնք ո'չ միայն գիւրամարս են , այլ մարմնոյն գործարանաց զարգացման պէտք եղած բոլոր սնուցիչ նիւթերը կը պարունակեն առաւելապէս :

Ռուէլի , լիէպիկի , Թարայնէրի պէս գիտուններուն անխոնջ եւ յամառ աշխատութեանց շնորհիւ , հասկցուած է թէ՛ մտին մէջ գտնուած Դրեպիմը (ure) (1) կամ միզային թթուի կը փոխարկուի , ասիկ յառաջ կուգան յօդացաւի , երկկամուրքի հիւանդութիւններ :

Եւրոպական քաղաքակրթ զգեցնէն շատերը մսակերութեան կը խորշին ո'չ միայն վընասակարութեանը համար , այլ նաև կ'առարկեն թէ՛ մարդիկ կենդանիները ուտելու եւ ո-

(1) Մըն օտրուակ թիւրեղացեալ անհոն , եւ դիւրանալ մարմնի մ'ե , որ միայն մսակեր կենդանաց եւ օտի մեղիկ , ինչպէս նաև գիշակեր բոյնոց ծիրին մեջ կը գտնուի , իսկ բուսակերներուն մեղիկ մեջ ոչ երբեք :

վաւերացուած , կամ թատերական ներկայացուած ըսե՛նք՝ իրենց ընկերային սնափառութեանց , եւ ուրիշներուն պատիւ ընելով ինքզինքնին պատուելու ձեւ մը ունին : Այսինքն , — նուազ գրականօրէն խօսելով — այն բազմաթիւ Հայերէն էր Պախալ Սարգիս որոնք իրենց անունին օրը մեծ ծախքեր կ'ընեն , բացառիկ բաներ , ինչպէս զորութիւնը կը ծալեն մէկ կողմ կը գնեն անպէտ բանի մը պէս , ու կը կերցնեն կը խրմցնեն իրենց հիւրերուն , որք հետեւեալ օրը տունէ տուն կը պատին ըսելով ,

— Ան ինչ խրչախ անուն ըրաւ . . .

Բարեբաղդաբար՝ Սարգիս աղան նպարավաճառ ըլլալով եւ կէս մըն ալ գինեպան . . . գրպանէն դրամ հանելու տեղ սպարանք կը հանէր խանութէն . ինչ որ միեւնոյն բանը է՛ : Այս պարագան փայլ մը , չեղաւ մը աւելի կուտար այդ տօնին մեր պարզամիտ թողեցիներուն աչքին :

— Նայինք այս սարի ինչ մեղիկներ պիտի զատէ բերէ . . .

Եւ ըսենք ի փաստ եւ ի գովեստ մեր նպարավաճառին որ անանկ հոտած , մըլտած , ծըթած , բորբոսած բաներ չ'էր հրամցնէր , թէ՛ եւ ասոնք պակաս չ'ըլլային իր խանութին մէջ . ուրիշ խնդիր որ հետեւեալ օրերը զանոնք իր թողեցիներուն քելու նպարավաճառային պարտականութիւնը խղճի մտօք կը կտտարէր . . . բայց անունին գիշերը « մաքուր սպարանք » , աւելի բացարձակ կ'անոն էր , այն աստիճան որ յաճախ ըսողներ կային խանութէն բան մը դընած ատեն .

— Սա ուր է . Սարգիս աղա , անունիդ գիշերը բաներ մը հանցիր , կա՛յ անկից . . .

նչայցնելու համար ստեղծուած չ'են , հապա զանոնք սիրելու պաշտպանելու եւ բուսակերութիւն ու պողակերութիւն կը քարոզեն :

Գիւլիյէ , Լինէ , եւ Օվէն , մարդուս անդամակերական յօրինուածքը քննելով ստուգած են թէ՛ մարդիկ (canine) կոչուած շնատանիներն ունին , որոցմով կրնան գիւրաւ միւր պատուել բայց իրենց սկոաները եւ մանաւանդ մարտողական գործարանները մսակերութեան համար եղած չ'են , ինչպէս կ'ապիկը՝ որուն շնատանիներն աւելի սուր եւ զօրաւոր են կարծր պատուները կոտրելու եւ կեղեւելու համար :

Թէպէտեւ մարդիկ կենդանեաց միւր կըրնան ուտել եւ մարտել . սակայն ընտելուելու այս պիտիները ուշ կամ կ'անուր կը պատէ մարտողութիւնը խանգարելով :

Կապիկը անօթութիւնէն բուսադատուած եւ կամ ուրիշ յարմարագոյն ուտելիքէ զրկուած ասան միս կ'ուտէ , եւ այն ատեն մորթային հիւանդութեան եւ կատաղութեան ենթակայ կ'ըլլայ , եւ կը կորսնցնէ իւր աշխոյժ ու արթուն ընտելուելու :

Մեր սոյն յօդուածներով գլխաւոր նպատակն է ժողովրդին մէջ ընդհանրացած մէկ նախապաշարուած գրուել , որով շատեր կը կարծեն թէ՛ միտն է մարդուս ամենակատարեալ եւ անհրաժեշտ սնունդը . ինչպէս յոյց տուինք մըսէն շատ աւելի սննդարար բանջարեղէնք , ընդեղէնք եւ պտուղներ կան :

Սակայն բացարձակ կերպով ալ չ'ենք արգիւր մսակերութիւնը , ինչպէս ուրիշներ կը քարոզեն ծայրայեղութեամբ մենք հասարակութիւնը չափաւորութեան կը յորդորենք մանաւանդ այսպիսի տար երկիրներու մէջ :

Կան հիւանդութիւններ , որոնց համար մըսի գործածութեան պէտք կը տեսնուի . ինչպէս Diabète . չաքարախտէ տառապողներու իբր սընունդ միս եւ հաւկիթ կը արուի միայն . իսկ պտուղ , բանջարեղէն , նշայ եւ չաքար պարունակող ուրիշ սնունդներ , մինչեւ իսկ կաթը , վնասակար են :

Նոյնպէս Gravelles phosphatique կոչուած հիւանդութեան ենթակայ եղողներուն մէջին մէջ քիւմարին քանակութիւնը պակասեցնելու համար միս տալ պէտք է :

Աւելցնենք նաև երկար ատեն հիւանդութեան տկարացած անձերուն իբր միակ սննդարար եւ գիւրամարս սնունդ արդանակ տալու է

եւ ով որ այս կերպով գիմէր իրեն՝ չ'էր խաբուէր . իր անունին խաթերը համար նպարովաճառը կը կակուղնար .

— Հ'ա բերնիդ հա՛մ տուաւ , կ'ըսէր խընդալով :

Պախալ Սարգիս շաբաթ մը առաջ կ'սկսէր իր « մեղեապաշարը » շտկել , յարգարել , կարգադրել : Համերուն առաջուց կը նայէր խանութով , իր կարծ , հասա ու իւրոտ մատուցներով , եւ շաբաթ մը առաջ ալ տեսցիք , — ինչպէս որ ասիկա սովորական է բոլոր ճշմարտապէս հայ տուններուն մէջ մեծ ատներու ատեն , — կ'սկըսէին խղճիք , ձեռք ձեռք տուած կ'աշխատէին նպարավաճառին տունը այդ մեծ օրուան վայել զիճակի մը մէջ գնելու , կը հագուեցէին կը « սըղուեցնէին » զայն :

Եկած է վերջապէս այդ պատմական գիշերը : Ահա Պախալ Սարգիսը , տեղաւորուել է արդէն բազմոցին անկիւնը , որուն մէկ քառորդը բռնած է իր անագին մարմինը , որուն ալ իր փորը կը դրուէ կարեւորագոյն մասը , կարելի չ'է երեւակայել ճշմարիտ պախալ մը անանց փորը : « Պախալի » մը փորը է՛ն չանկան , գեղեցիկ , ու խորհրդանշանական մասը կը ձեւազնէ իր խանութին , կարելի է ըսել թէ՛ մէկ մարմին կը կազմէ անոր կարգ մը սպարանքներուն հետ , մերձաւոր ազդակներ , « խնամք » է տրկերուն , տակաւններուն , պարկերուն , եւ անոնց հետ կը չիթթուի յաճախ . . . : Պախալի մը փորը կ'երգէ փառք իր նպարեղէններուն , բոլոր այն ճարպոտ , իւրոտ , գունդ ու կլոր , համով հոտով եւ գոյնով բաներուն գործնք կը ծախէ , եւ այ-

Տուէ՛ իմ ցուպը , նեղիկ մ'եմ , քրչուաւ , վրասն կրթիկի , անցնիկ շեռ ու սար , ճակատքս դրնեմ հայրենի հողին , Ինչպէս կը վրայ արցունքներս հոսին .

Տուէ՛ հայրենի ճորճերս հազնիկ , Ձոր կայսեց ինձմէն անգորք քշուսիկ , Ռի , իմ աչս սուգն , ա՛յ հերի՛ք է , հերի՛ք , Թողէ՛ գարնան հեռ մեկտեղ գարնարուիլ :

Տուէ՛ իմ փունջեր , պրասկ բոյորեմ , Հայ կուսից ֆեֆոյզ գրախներ գարնարեմ , Թոյ սգաւորի պարեգօսն հսկելու , Կարմիրներ հազնիկ , երգն ու պարեն :

Տուէ՛ իմ վարդեր , հարսնուկն ու յաւիկի , Արիւնով ծրլած կը մընան փափկիկ , Հայոց հարսները՝ սիրելեաց սիրուն՝ ճակատնիկ դրնեմ թո՛ղ սիրելագիրի :

Տուէ՛ իմ գրիչ , գրեմ իմ սաղեր , երգեմ Հայրենեաց Հոգոյն մասաղներ . Փոխան ողբերգի՝ գովեստներ հիւսեմ , Թո՛ղ փայլիս անունց սուրբ յիշատակներ :

Տուէ՛ իմն , տուէ՛ իմ քանի ու փայտաս Անունց ֆոյ բրբեմ իմ ցուրս գերեզման , Տար աշխարհ ասրի՛ց՝ անունցնէ անցաս՝ Այր իմն հաւատ , ո՛հ , մահ է յարիսեան :

Տուէ՛ իմն իմ Խայն ու Անտարան , Ամբարիչսֆ ստիկն ու գերի սարան , Տուէ՛ Հայրենեացս յսնձնեմ Տերտերին Որ նոֆօֆ կնէֆ իմ աչ գերեզման .
1898 , Յունիսար 26
Ղ . ԵՊ . Ը .

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՄԸ ԿԱՄ

ՊԱԽԱԼ ՍԱՐԳԻՍԻՆ ԱՆՈՒՆԸ

Պախալ Սարգիսին անունն էր այդ շաբաթ գիշեր . Պախալ Սարգիսը այդ թաղին ջոջն էր . այդ թաղն որ հարցնէք Իւկիւտտորի ժողովրդային , ըսել կուզեմ խեղճուկ թաղերէն մէկն էր . . . Պզֆիկ գեղին մենծ Աղան : Մանուկներու , Չկեռուներու , Եագնանիներու , հիւանդութեան մէջտեղ էր որ կը ճօճէր մեր նպարավաճառին ջոջութիւնը : Տարուէ տարի՝ Պախալ Սարգիսին « անուանակոչութեան տօն » ը մեծ , շատ մեծ պէտք մըն էր այդ թաղին պարզուկ կանքին մէջ : Ամբասներ առաջ թաղեցիք կ'սկսէին ամենայն երկայնամըտութեամբ սպասել այդ երջանիկ օրուան , եւ առաջուց մատուցնին կը լզէին անունին գիշերը ուտելիք մեղեցիկներուն երեւակայութեանը վրայ լաւ մը քսելէն ետք . . . Որովհետեւ իր անունին « Պիւֆէ կը շտկէր » մեր նպարավաճառը , իր ճոճը . . .

Անձամբերութեամբ կ'սպասէր այդ օրուան Պախալ Սարգիս : Ան կարգ մը Հայերէն էր , — ճշմարիտ Հայեր , — որոնք իրենց անունը կը տօնեն արտակարգ հանդիսաւորութեամբ , անձերնուն վրայ կ'աղմած բարձր համարումին արժանի եւ պատշաճ արարողականով մը , որոնք այդ օրը կը սեպեն իբր հրապարակային մէկ ցոյցը ,

ՆԱՄԱԿ ՓԱՐԻՁԵՆ

ՊԱՏԱՆԻ ՄԸ ՈՐ ԻՆՐ ՄԱՅՐԸ ԿԸ
ՊԱՇՏՊՈՒՆԷ

Փարիզի մարդաշատ փողոցներէն միայն մէջ երէկ մարդասպանութիւն մը տեղի ունեցաւ հետեւեալ հանդամանքներուն մէջ .
Մօտ 15 սարի առաջ կար կարող կին մը իւր երիտասարդ հասակին մէջ կը կորսնցնէ իւր էրիկը շուտափոյթ մահով մը : Այրի կինը միայն երեք տարեկան երեխայով մը միայնակ կը մնայ Փարիզի մէջ , որը իւր միակ մխիթարանքն ու յոյսն էր : Երկար տարիներ այրի կը մնայ և բնաւ չը մտածեր ամուսնութեան վրայ , այլ հոգւով ու մարմնով ինքզինքը իւր գործին նրատիրելով կը մեծցնէ իւր երեխան :
Իւր գրագիտներէն մին՝ փորագրիչ գործաւոր մը , քանի մը տարի շարունակ ետեւէն կը յիշեալ կնոյ , որպէս զի հետը ամուսնանայ . խեղճ կինը բաւական դիմագրելէ յետոյ խօսք կուտայ գործաւորին առաջարկը ընդունելու . ասոր վրայ բանը այնպէս կը դառնայ որ կար կարող կինը գործաւորին սիրուհին կ'ըլլայ փոխանակ օրինաւոր կինը լինելու : Բաւական ժամանակ միտսին կ'ապրին . բայց գործաւորը կամայ կամայ գործէ կը պաղի . ատեն մը կուգայ որ նա այլեւս չէր աշխատէր , այլ իւր սիրուհւոյն երեսէն կ'ապրէր : Հրէշային գործաւորը ոչ միայն իւր սիրուհւոյն աշխատանքովը կ'ապրէր , այլ և զայն շատ անգամ կը ծեծէր : Ամեն երեկոյ սրճարաններու , գինետուններու մէջ մինչեւ կէս գիշեր կը մնար . կ'ատէր իւր սիրուհւոյն օրինաւոր զաւակը , բոլորով որ իրենը չէր և զայն ալ կը ծեծէր ոչինչ պատճառներով :

Վերջապէս անցեալ տարի գործաւորը աստիկ կը ծեծէ իւր խեղճ սիրուհին , այն աստիճան որ ոտիկանութիւնը կը միջամտէ և վայրենի գործաւորը 8 ամսուան բանտարկութեան կը դատապարտէ : Կնոյ օրինակին , « իւրաքանչեւ » ալ կ'ընեն . հիւանդութիւն ալ , բանտարկութիւն ալ , բարակին հաստին , էվէլին պակասին շատ չ'են նայիլ ու չորս տարեակ իրար փակցնելով գէշ աղէկ տուն մը կը տնկեն տեղ մը և մէջը կը նստին .
— Օ՛խ , ազատեցանք պէ սա « փրայնէն » . « Օր ըլլայ , դրամ վաստկիմ , կը խորին , կը մեծցնեմ պակասները կը լեցունեմ » : Ասկից ասոր տարի առաջ ճիշդ այնպէս ըրած էր Պատիւ Սարգիս . և քիչ քիչ , տարուէ տարի , նորոգելով , աւելցնելով , լրացնելով , տարի մը պատշգամ մը դուրս ելլալով , յաջորդ տարին յարկ մը բարձրացնելով , ներսի կիսկատար մնացած շինութիւնները , ներկերը ծեփերը հետազնետէ ամբողջացնելով , օրին մէկը հաւելի վերանէն գնելով և զայն պարտեզի մը վերածելով մէջն ալ շարահարով , յաջողած էր երկու յարկով մէկ ձեռնայարկով կոկիկ աղւոր , տուն մը յառաջ բերել որ թողին պարծանքն էր ու տիրոջ երջանկութիւնը . դրացի անակներուն մէջ տեղ թագուհիի պէս կը սիգար անիկա , իր շուքը տալով անոնց որ կը փառաւորուէին անով :
Սենեակը ուր նստած էր նպարավաճառը քառակուսի սենեակ մըն էր շատ մը հայկական սենեակներուն պէս : Չորս հատ լայն , ցած ու իրարմէ քիչ անջատ պատուհաններ կ'ան , որոնց ճեղքակ կտաւէ վարդոյրները խնամով վար առնուած է ու բարձրորուն ետին ամաւր մը խօթուած . իսկիւտար ժողովրդային քաղաք մընէ ուր առաջին յարկի պատուհաններուն ցածու թիւնը թոյլ կուտայ անցորդին ներս նայիլ և անցած դարձածը տեսնել . Յետոյ իսկիւտարցիք , ճշմարիտ գեղացիներ , այնքան վարժուած են

պարտին կառավարուիլ անարգ ստրուկներու հօտի մը պէս :

Եւ ասոր համար է որ որոշած է այդ դարչելի տնուեր տալու ձեւ ստակով շինուած այդ նոր ճամբուն :

Մալթացիներ .
Կրնաք համակերպութեամբ տանիլ այդ կեղեքումը , մինչև որ նախախնամութիւնը գայ զձեզ ազատել . բայց չէք կրնար դուք ալ այդ անպատուութեան համամիտ գրաւուել . պէտք է որ յայտարարէք միաձայն թէ՛ երբէք չ'պիտի թոյլատրէք որ այդ նոյգլալի մարդուն անունը ձեր ամենուն կողմէ նուիրուի ձեր հայրենիքի մէկ փողոցին :

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ինչպէս ծանուցուած էր , այսօր՝ երեկոյեան ժամը 8-10 1/2 , ՍՕԼՃԸՐՄ ՂՕՄԻ փառայի սրահին մէջ տեղի պիտի ունենայ ի նպատակայ աւետարանական դպրոցին տրուելիք հանդէսը , որուն ներկայ ելողները պիտի կրնան ունենդրել գաշակի ջուրակի և երգչուհի վրայ բնութի կտորներու՝ երգերով հանդերձ :

Անդրացի նշանաւոր Տիկին մը՝ անձնուրբար յանձն առած է մեներգներով (solo) մասնակցել հանդիսին :

Նոյնպէս անդրացի պարոն մը ստանձնած է որովայնախօսութիւններով կարի հետաքրքրաւոր ձեւ շահեկան ընել երեկոյթը :

ԳՈՐԾԱՒՈՐՈՒՀԻ ԿՈՒՁՈՒԻ

Գերձակուհի Տիկին է . Ա . Ասլանեանի Աղլիյիէին համար գործաւորութիւնը պէտքը կայ . փափաքողը կրնան դիմել իրեն բնակարանը ի Պապ-էլ-Լուք Հէլուանի կայարանին անկիւնը :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Կ . Պօլիս 1 Մայիս . — Եէմէնի ապստամբութիւնը կաւելնայ , խիստ սպառնալից եղանակաւ :

Կ . Պօլիս 2 Մայիս . — Ժանտարտի գէպը մը պատահած է Ղալաթիոյ մէջ :

ով որ նպարավաճառին իսկ խոստովանութեամբ չ'եմ գիտեր քանի ոսկիով ելեր էր :

— Ամբողջ խանութի ծախու կ'առնէ , կ'ըսէր Մանավ Գիբորը . յանդուգն պոռոտախօսութիւն մըն էր ստիկայ որովհետև ինչպէս ամէն մարդ գիտէ , « մանավ » ի մը դրամազրուելը մեծ բան մը չ'է :

Գիշերազգեստը մէջքէն կապ մը ունէր և ձախ կողմը խոշոր բերանաբաց գրպան մը ուր խոշոր թաշկինակ մը : Այսպէս ահա , մինչ հայ ընկերութեան բարձր ըսուած գասակարգին մէջ նորեկով մարդեր յընկնկորով , փռափով , պօս-ժուռով և զիտ չ'եմ գիտեր ինչով կ'ընդունին , մեր նպարավաճառը , հարազատ զաւակ իր ցեղին , հինին աւանդապահ տնեղձ Հայ , ժողովրդային պարզուկ տիպար , ամէն բանէ առաջ իր մարմնոյն հանգստութեանը սիրահար , նախանձախնդիր ազատ համարձակ շարժելու շնչելու , այսպէս ահա՛ նահագնատական հագուստով կը հիւրընկալէր , և իր հիւրընկալութիւնը յընկնկոյ , փռափ կամ պօսժուռ չի հագնելուն համար միթէ աւելի տաք ու անկեղծ չ'էր : Բոլոր աս բաներուն վրայ երեւակայցեցէ՛ք գերընտիր կեռասափայլէ « չիպրախ » մը , սակի կոթով , և կ'ամբողջանայ մեր նպարավաճառին այնքան հայտախառն ու նոճ դիմագծութիւնը : Այժմ որ պատմեցինք տանտէրը , ըսենք նախաւորը : Տունը իրենն էր : Պատիւ Սարգիս տնահայրէն էր որոնք տան վարձքի համար վճարուած ստակը ծովը նետուած կը սեպեն իրաւամբ , և ինչ կ'ընեն չ'են ըներ , քիչ մը զբաւ կը վասակին քիչ մըն ալ հոսկէ հոնկէ կը ձարեն , պարտք կ'ընեն իւրեք կ'ընեն , ի պահանջել հար-

որ մտին մէջ գտնուած բոլոր սնուցիչ նիւթերը կը պարունակէ իր մէջ : Առողջապահիկ սննդաւորութեան հեղինակ հոշակաւորն թրուած ևս զայս միայն կը յանձնարարէ մասնաւոր կերպով :

ՀԱՅԿ

Գահիրէ 29 Ապրիլ 1901

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

Մ Ա Լ Թ Ա

Մալթայի կառավարիչը՝ Սթրիբլէնտ կոմս , որոշած էր Չէմպրէյնի անունը տալ Լավալէթը Փլորինայի կապող նոր փողոցին . սակայն տեսնելով ժողովրդին գրգռումը այդ որոշման համար , նպատակը փոխած է , և Եօրքի Դուքսին անունովը մկրտած է փողոցը :

Ժողովրդին գրգռմանը վրայ գաղափար մը տալու համար , կը բաւէ , փողոցներուն մէջ փակցուած հետեւեալ յայտարարութեան ծանօթանալ :

« Անկցի՛ Զէմպրէյն » .

« Մալթացիներ » . — Սթրիբլէնտ կոմսը զձեզ կը նտրատէ , կառավարութիւնը զձեզ կ'ապտակէ , և դուք կը համակերպիք ատոր , ու կը լուէք :

Գաղթավայրի նախարարը , Պիրմինկամի շարաքատիկ մարտը , Իւլանտայի կեղեքելը , ան՝ որ իր փառասիրութեանը համար Անգլիան անգունդին եզերքը հասցուց , մէկ բառով Չէմպրէյնը , ձեր անունովը պիտի պատուուի և փառաւորուի , Սթրիբլէնտ կոմսին կառավարութեան որոշումով : Եւ գիտէ՞ք ինչու համար . որովհետև յետև յանդուգնութիւնը ունեցաւ ձեզի՛ ձեր հարազատ ներկայացուցիչներուն անպատուելու . յայտարարելով թէ՛ Մալթացիները միւս Անգլիացի հպատակաց պէս իրաւունք չունին ազատութեան . որովհետև Մալթա թանկագին բերդ մըն է կայսրութեան համար և հետեւաբար Մալթացիները

սու՛ կարելի լաւագոյն ռեֆրան է իր խանութին , կենդանի ազրը , շրջուն մունետիկը : Կասկածեցէ՛ք նպարավաճառէ մը որ փոր չ'ունի . այդ մարդը սխալած է իր կոնուսին վրայ . քիչ ատենէն խանութը պիտի գոցէ փնասով : Թէեւ նպարավաճառի մը նկարագրութեանը համար միայն փորը լի ու լի կը բաւէ և զէմքը երկրորդական է իր նշանակութեամբ , ըսենք սակայն թէ Սարգիս ազան իր փորին արժանի զէմք մը ունէր , բոլորը , ուսուցիկ , բազմախելակ . խոշոր պտղած աղանջներ . խոշոր մեծաշուք քիթ մը . ըսել կ'ուզեմ որ մէկ կողմէն մեծ շուք մը կը ձգէր . թաւ ու սեփսեւ յօ՛քբուռ տակ պծրատցող աչքեր . յորդաւատ պիտիւր , որոնց թեւերը ծախած ջուրը սիւրիւրիսին , ուն պէս խիստ էին , անկարգ ու խոռոմաւուն . և պիտիւրուն շուքին տակ՝ անագին բերան մը որ կը պատմէր այն խոշոր պատանները որոնց համար շինուած էր : Երեսին գոյնը կարմիր , զրուարթ , բաց : Մեղմամղձոտ հայերէն չ'էր պախալ Սարգիս : Իր երակներուն մէջ այնքան աւելին և արիւն կար որքան գինի իր սակաւներուն մէջ :

Հագած էր կարմիր նախշուն պատկառի գիշերազգեստ մը որ տօնի օրեր միայն դուրս կ'ելլար տանտիկնոջ պահարանէն . ասոր վրայէն մը . ըսեմ անմիջապէս , — որովհետև կը վախնամ թէ կը մոռնամ , — որ թողին մէջ միայն պախալ Սարգիսը ունէր այդ տեսակ բան մը : Այս « փրայն » , իր փորին հետ ու խանութին , որ « փրայն » ի պէս լեցուն է կ'ըսէին , գլխաւոր զարդը կը կազմէր իր անմիջելի շոջութեան , Թաղեցիք հպարտ էին այդ « փրայն »

ւոր զաւակը տեսնելով իւր մօր անխիղճ մարդուն մեկնելը իւր մօր կ'ըսէ որ այլ ևս այն մարդուն երեսը չի նայի, ապա թէ ոչ ինքը պիտի ստիպուի տունէն հեռանալ:

Մայրը գորովայն աչքերով կը խօստանայ իւր հարազատին որ բնաւ երբէք յարաբերութիւն չի պիտի ունենայ գործատրին հետ, և մայր ու տղայ կ'սկսին աշխատիլ իրենց օրապահիկին հայթհայթման:

Ասկէ քանի մը շաբաթ առաջ գործաւորը բանտէն կ'ելլէն. աղատուելէ ի վեր կուզէ ելլել իւր նախկին սիրուհին տեսնել և նորէն անոր հետ բնակել. իւր ծանօթները իրեն խորհուրդ կուտան իւր գաղափարէն ետ կենալ:

Բայց նա ընդհակառակը օր ըստ օրէ աւելի կը փափաքի իւր սիրուհուն. քանի մը անգամ անոր կը հանդիպի փողոցին մէջ, բայց կինը կը մերժէ անոր բոլոր առաջարկները: Երէկ կերակէ, կէս օրէն յետոյ ժամը մէկին, մայր և տղայ իրենց տունէն դուրս կ'ելլեն պտտելու համար. յանկարծ փողոցի մը անկիւնը իրենց գիմացը կ'ելլէ գործատրը որ իրենց դժբաղդութեան և չարչարանաց պատճառ եղած էր. սա կ'սկսի նորէն առաջարկներ ընել կնոջը, երբ վերջինս կը մերժէ, գրպանէն դանակ մը հանելով թեթեւ կերպով կը վիրաւորէ իւր նախկին խաբած սիրուհին. զաւակը տեսնելով իւր մօր արիւնը, կայծակի արագութեամբ կը յարձակի գործատրին վրայ, զէնքը ձեռքէն կը խլէ և մօտ հինգ հարիւր հեռաքըրքիւրներու ներկայութեան նոյն գանակով շորս հարուածներ տալով տեղն ու տեղը կ'սպաննէ գործատրը. . . . Ներկաներէն շատերը ծափահարեցին պատանուոյն ըրածին վրայ և բոլորը գոլեցին իւր ծնողասիրութիւնը:


Գեղեցիկ օրինակ!
Մ. Ս. ԴԱԻԻԹ ԲԷԿ

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՏՆԻ ՄԻՋՈՒԱ ԼԱՅՑ
ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԽԱՌՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 563 ՄԻԼՈՆ
Ապահովագրականներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:
Ապահովագրականներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼՈՆ որ գրեթէ այնպէս որքիչ սրէ է ընկերութենէ մէկ միլիար աւելի է:
Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ է Գաւհիրէ
ԳՈՐԾԱԿԱԼ Ի ՄՈՒՍԻԻ
—* ԳԷՈՐԳ ԵԿԱՒՕՑ *

Ս Ի Ն Կ Ե Ր
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԵՐ
Պալատի փողոց. Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթլ Սթրիթ Տիշը գիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից:
Հին եՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԻ
Այնպէս ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐ ներս են և տանցմէ մինչև ցար 17,000,000 ծախուած է:
400 է աւելի վիսյախաններով և մեխանիզմով վարձատրուած, Երաշխատուող մեքենաներ,
ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՁՍԵՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ
Փարիզի 1900 ի Տիեզերական արտեսանակիչին մէջ ստացած է:
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲԸՈՒՄՈՑ ԿԱՅՆԵՐԱԿԱՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԿՂՈՑ-ԿԱՅՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն՝ Բ. ԵՏԻՎԱԿԱՆ ՅԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ Ի յաճկանչիմ:
ԳԻՆ ՉԱՓԱՌՈՐ
Չրի դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԵՐ մեքենայից համար, յաճախորդաց տուններուն մէջ:
Վճարմանց Դիւղութիւն
Փոխանակութիւն ինչմեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից



ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐՔԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ
ԿԻՐԱԿԻ 28 ԱՊՐԻԼ 1901

7253	2621	6213	2164	420	1112
1113	1234	2715	2816	3229	3396
3482	3725	3823	3886	4605	4949
5870	6231	6585	7048	7160	7299
7332	7580	7814	8265	8266	8887

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ
ՈՒՐԱԿՈՒ 3 ՄԱՅԻՍ 1901

1393	768	2436	382	884	131
231	860	1499	2118	2970	3161
3786	3306	4081	4740	4902	5408
5710	6149	6376	6899	6613	7285
			7729	8132	9951

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
«ԱՐՇԱԼՈՅՍԻ»
ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900
ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱՁԻՁԻ ՍԿԶԲԸ
Օտանկի ղեղարանին ղիւնացի փողոցիցն ալ:
Ժողովրդական Տպարանին մէջ կը պատրաստուին:
Այցեխարտեր, Երգարտարաններ, Գիտեր, Հրատարակներ, Մանագրներ, Տեղեկագրներ, Կանոնագրներ, Տոմսեր և այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւններ կը վաճառուին հետեւեալ դրերին:
1. ԲՆԱՇԻՍԻՐՀԻԿ ԲԱՌԱՍՐԱՆ Ի Ա. Ե. Բ. պրակներն:
2. ՈՐԲՈՒՆԻ որոյ ի թուրքիա մուտքը, ինչպէս կը լսենք, արգելուած է:
3. ՀԱԻԱՔԱՄՈՑ հայոց ժողովրդական երգերու: